MOODY'S
INVESTORS SERVICE

Վարկանիշ՝ Moody's վարկանիշային գործակալությունը «Յունիբանկ» ՓԲԸ-ին (Հայաստան) շնորհում է Ba3/ NP/ E+ վարկանիշը

Համալիր վարկային հետազոտություն՝ 3 հունիսի, 2010թ.:

Առաջին անգամ շնորհված վարկանիշեր

Լիմասոլ, 3 հունիսի, 2010թ.
Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից Հայաստանի «Յունիբանկ» ՓԲԸ-ին այսօր շնորհվել է բանկի ֆինանսական կայունության (BFSR) E+ վարկանիշ, ինչպես նաև Ba3 երկարաժամկետ և Not Prime կարճաժամկետ համընդհանուր ազգային արժութային ավանդային վարկանիշ և Ba3 երկարաժամկետ և Not Prime կարճաժամկետ արտարժույթային ավանդային վարկանիշ: Բոլոր շնորհված վարկանիշերը կայուն են:

«Վարկանիշերը շնորհելիս հաշվի է առնվել բանկի կայունության լավագույն առավելությունը, որն ամրապնդվել է «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի կիրառման բացառիկ իրավունքով, Հայաստանում ներկայացնելով դրամական փոխանցումների եկամտաբեր բիզնեսի 50 տոկոսը», - ասում է Նախագահի տեղակալի օգնական-վերլուծաբան, Լիմասոլում Moody's-ի գրասենյակի հայաստանյան բանկերի գծով առաջատար վերլուծաբան Ստաթիս Կիրիակիդեսը:
Համակարգը ռուսական Յունիստրիմ բանկի սեփականությունն է, որի մեծ մասը պատկանում է Յունիբանկի վերջնական շահառու-սեփականատերերին: Հաշվի առնելով, որ դրամական փոխանցումները կազմում են Հայաստանի ՀՆԱ-ի 20 տոկոսը, Moody's ընկերությունը գտնում է, որ հայաստանյան շուկա ներթափանցած «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի հաջողությունը բարձրացրել է Յունիբանկի լիցենզիայի արժեքը և բրենդի ճանաչելիությունը:
Յունիբանկի առաջնային դիրքը դրամական փոխանցումների բիզնեսում բանկին լրացուցիչ հնարավորություն է ընձեռում մեծ ծավալների ավանդների ներգրավման և ծառայությունների խաչաձեւ վաճառքի (cross-selling) համար:

Բանկը ցուցաբերել է կապիտալիզացման դրական հարաբերակցություն կանոնադրական կապիտալի համալրումների միջոցով (ամենավերջինը կատարվել է 2010 թվականի մարտին), որը հնարավորություն է տալիս դիմակայելու ակտիվների որակի որոշակի վատթարացմանը:

Միաժամանակ, Բանկի E+ BFSR վարկանիշը, որն արտահայտվում է Ba1 վարկերի գնահատման բազայի վրա, նույնպես արտացոլում է Բանկի բազմաթիվ խնդիրներ, ներառյալ՝
ա/ նյութական վարկային ռիսկերը, որոնք առաջացել են չափազանց մեծ միանձնյա գնահատումից,
բ/ խնդրահարույց վարկերի ուղղությամբ աշխատանքների իրականացում (ներկայումս զեկուցվել է դրանց դրական մակարդակի վերաբերյալ), քանի որ վերակառուցված վարկերը արդեն փորձված բնույթ են կրում,
գ/ զուտ տոկոսային մարժայի իջեցումը վկայում է որպես հաճախորդների ավանդների գնային մրցակցություն, որը բանկերի համար ֆինանսավորման կառուցվածքի հիմքն է հանդիսանում, ինչպես նաև հաճախորդների վարկավորման ուղղությամբ մրցակցության ակտիվացում,
դ/ աշխատանքի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը,
ե/ տեխնոլոգիական ենթակառուցվածքների, ինչպես նաև ռիսկերի կառավարման մեթոդների հետագա կատարելագործում,
զ/ նրա ազդեցությունը Հայաստանի չդիվերսիֆիկացված ազգային տնտեսության վրա, ինչպես նաև երկրի փակուղում հայտնված ներքին և մարզային քաղաքական ռիսկի վրա:

«Յունիբանկի» Ba3 երկարաժամկետ ազգային արժութային ավանդների (GLC) վարկանիշը հիմնված է համակարգային աջակցման միջին հավանականության Moody's ընկերության գնահատականի վրա, Հայաստանի Ba1 պարբերական օգնության գործակցի վրա, անհրաժեշտության դեպքում: Այդ պատճառով էլ B1 BCA վարկանիշի բարձրացումը միանգամից իր դրական ազդեցությունն է ունենում ազգային արժութային ավանդների (GLC) վարկանիշի վրա: Բանկի երկարաժամկետ ազգային արժութային ավանդների վարկանիշը նույպես ընդգրկվեց Ba3 վարկանիշում, որը չի սահմանափակվում Հայաստանի արտարժույթային ավանդների առավելագույն քանակով: Թե ազգային, թե արտարժույթային կարճաժամկետ ավանդների վարկանիշերը վարկանշվել են Not Prime:
«Յունիբանկի» վարկանշման հիմնական մեթոդոլոգիան օգտագործվել է "Բանկի ֆինանսական կայունության վարկանիշեր. Համընդհանուր մեթոդիկա" և "Moody's-ի բանկային վարկանիշերին համընդհանուր դեֆոլտի վերլուծության ընդգրկում. Կատարելագործված մեթոդիկա" փաստաթղթերից, որոնք կարող եք գտնել www.moodys.com կայքում "Հետազոտություններ և վարկանիշներ" մասի "Վարկանշման մեթոդոլոգիաներ" ենթագլխում: Մյուս գործոնները և մեթոդները, որոնք հաշվի են առնվել «Յունիբանկ» ՓԲԸ-ին վարկանիշ տալու համար, կարող եք նույնպես գտնել Moody's-ի ինտերնետային կայքի "Վարկանշման մեթոդոլոգիաները" ենթագլխում:

«Յունիբանկ» ՓԲԸ-ի, որի գլխամասային գրասենյակը գտնվում է ք. Երևան , Հայաստանի Հանրապետություն, ընդհանուր ակտիվները 2009 թվականի դեկտեմբերի դրությամբ կազմել են 108 միլիարդ ՀՀ դրամ (288 միլիոն ԱՄՆ դոլար):

Լիմասոլ,
Մարդիգ Հալաջյան
Գլխավոր մենեջեր,
Ֆինանսական հաստատությունների խումբ
Moody's հետազոտական ծառայություն (Կիպրոս)
Լրագրողներ՝ 44 20 7772 5456
Բաժանորդներ՝ 44 20 7772 5456

Լիմասոլ,
Ստաթիս Ա. Կիրիակիդես, CFA
Նախագահի տեղակալի օգնական-վերլուծաբան
Ֆինանսական հաստատությունների խումբ
Moody's հետազոտական ծառայություն (Կիպրոս)
Լրագրողներ՝44 20 7772 5456
Բաժանորդներ՝44 20 7772 5456

MOODY'S
INVESTORS SERVICE

© Copyright 2010, Moody's Investors Service, Inc. and/or its licensors including Moody's Assurance Company, Inc. (together, "MOODY'S"). All rights reserved.